

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2021 թվականի

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվետու տարում իրականացված ներքին աուդիտի վերաբերյալ տարեկան ամփոփ հաշվետվություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի թվով 69 մարմինների կողմից (տե՛ս Ցանկ N 1 և Ցանկ N 2), այդ թվում 37 պետական և տարածքային կառավարման մարմինների (այսուհետ՝ ՊՄ) և 32 տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից:

Ներքին աուդիտ իրականացրած թվով 69 պետական և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից թվով 43-ում ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը արտապատվիրակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ Կազմակերպություններ), այդ թվում 23 ՊՄ-ներում և 20 ՏԻՄ-երում:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 37 ՊՄ-ների կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 14-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ թվով 23-ում՝ Կազմակերպությունների միջոցով:

Ներքին աուդիտ չի իրականացվել թվով 12 ՊՄ-ներում, ինչը թվով 9-ի պարագայում պայմանավորված է ներքին աուդիտի ստորաբաժանումների լուծարված լինելու հանգամանքով, թվով 1-ում (ՀՀ նախագահի աշխատակազմ) հաստիքները համալրված չեն եղել, թվով 1-ը (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե) ձևավորվել է 2021 թվականին, իսկ ՀՀ ոստիկանությունում ներքին աուդիտի կազմակերպման գործընթացը կասեցվել է մինչև ներքին գործերի նախարարության ձևավորումը:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 32 ՏԻՄ-երի կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 12-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ թվով 20-ում՝ Կազմակերպությունների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Լիազոր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով վարվել և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» (այսուհետ՝ Ցանկեր): Այդ Ցանկերում ներառված տվյալների համաձայն 2021 թվականի տարեսկզբին Ցանկերում ընդգրկված թվով 275 աուդիտորներից թվով 101-ը հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատողներ, իսկ 2021 թվականի ավարտին՝ թվով 274 աուդիտորներից միայն թվով 81-ը:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2021 թվականին իրականացվել է տարեսկզբին Ցանկերում ընդգրկված 275 որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, որի նպատակով նախատեսվել են և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում հրապարակվել են պարտադիր 14 և 8 լրացուցիչ թեմաներ (որոնցից ըստ հայեցողության ընտրվում են 2-ը): Ընդ որում պարտադիր թեմաները ստորաբաժանման ղեկավարի պարտականություններ իրականացնող ներքին աուդիտորների համար ներկայացված են առանձին:

2021 թվականին կազմակերպվել են թվով 12 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են թվով 216 որակավորված ներքին աուդիտորներ, ընդ որում թվով 49-ը՝ ներքին աուդիտի ղեկավարի պարտականություններ կատարողներ: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 216 աուդիտորներից թվով 79-ը հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում 51-ը՝ ՊՄ-ների, 28-ը՝ ՏԻՄ-երի և 58-ը Կազմակերպությունների աշխատողներ, 79-ը՝ ֆիզիկական անձինք: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին

մասնակցած աուդիտորների թվաքանակը 2020 թվականի համեմատությամբ նվազել է 26-ով կամ 10.7%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 10-ով կամ 4.4 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկերում ընդգրկված թվով 59 աուդիտորներ, որից թվով 54 աուդիտորներ վերապատրաստման դասընթացին մասնակցության հայտ չներկայացնելու, թվով 4-ը դասընթացին չմասնակցելու և թվով 1-ը գործուղման մեջ գտնվելու պատճառով: Վերապատրաստման դասընթացների փուլին չմասնակցած աուդիտորների թվաքանակը ավելացել է ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2019 թվականի համեմատությամբ, համապատասխանաբար 2020 թվականի համեմատ 60-ով կամ 50.4 %-ով, իսկ 2019 թվականի համեմատ 10-ով կամ 14.4 %-ով:

Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների արդյունքներով կազմակերպվել և անց է կացվել թեստավորում, որի արդյունքներով թեստավորման ենթակա 218 ներքին աուդիտորներից թեստավորվել են 211-ը, 7-ը չեն ներկայացել թեստավորմանը: Թեստավորմանը մասնակցած թվով 211 աուդիտորներից թվով 2-ը թեստավորվել են ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրամանով հաստատված կարգի 32-րդ կետի համաձայն:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորման փուլին մասնակցած թվով 211 աուդիտորներից թվով 78 աուդիտորներ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում՝ 50-ը ՊՄ-ների, 28-ը ՏԻՄ-երի, իսկ թվով 133-ը չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների աուդիտորներ (76-ը ֆիզիկական անձինք են, 57-ը՝ Կազմակերպությունների աշխատակիցներ):

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցած աուդիտորների թվաքանակը 2020 թվականի համեմատությամբ պակասել է 31-ով կամ 12.8%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ պակասել է 11-ով կամ 4.5 %-ով:


Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 211 աուդիտորներից թվով 206-ը հաղթահարել են թեստավորման նվազագույն շեմը, իսկ թվով 5 աուդիտորներ (1-ը ֆիզիկական անձ, 4-ը Կազմակերպությունների աշխատակիցներ) չեն հաղթահարել սահմանված նվազագույն շեմը: Թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների քանակը 2020 թվականի համեմատությամբ նվազել է 2-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ ավելացել է 3-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը

չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել է և նրանց անունները հանվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերից:

Այսպիսով, 2021 թվականի ընթացքում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկերում ընդգրկված թվով 15 աուդիտորներ, որից թվով 3-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, թվով 7-ը թեստին չներկայանալու և թվով 5-ը թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու հետևանքով: Նշված ցուցանիշը 2020 թվականի համեմատ նվազել է 107-ով կամ 87.7 %-ով, իսկ 2019 թվականի համեմատ՝ 37-ով կամ 75.5 %-ով:

Ստորև գծապատկերում ներկայացված են կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, թեստավորմանը մասնակցած, ինչպես նաև թեստավորման նվազագույն շեմը հաղթահարած աուդիտորների 2019-2021 թվականների համեմատական ամփոփ ցուցանիշները.



«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2021 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 12 որակավորման քննություն: Որակավորման քննություններին, ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ են ներկայացրել թվով 74 դիմորդներ: Նշված ցուցանիշը 2020 թվականի համեմատությամբ ավելացել է 63-ով կամ շուրջ 6 անգամ (ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020 թվականին COVID-19 կորոնավիրուսային հիվանդության տարածման հետևանքով սահմանափակումների պայմաններում Լիազոր մարմնի կողմից որակավորման քննությունները հնարավոր է եղել կազմակերպել և անցկացնել միայն մեկ անգամ՝ տարեվերջին), 2019 թվականի համեմատությամբ նվազել է՝ 24-ով կամ 32.4%-ով:

Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 74 դիմորդներից որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 43 դիմորդներ և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:


«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում» ընդգրկվելու նպատակով, 2021 թվականի ընթացքում ստացվել է 22 դիմում և բոլորն էլ բավարարվել են, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք համապատասխանաբար ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:

Նշված ցուցանիշը 2020 թվականի համեմատությամբ նվազել է 11-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ ավելացել 60-ով:

Այսպիսով, համադրելով ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերում ընդգրկվածության վերաբերյալ վերը նշված դինամիկայի


վերլուծության արդյունքները, ստացվում է, որ 2021 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 274 աուդիտոր, որը նախորդ 2020թ. համեմատությամբ նվազել է ընդամենը 1-ով կամ 0.4%-ով և 2019թ. համեմատությամբ՝ 87-ով կամ 24%-ով:

Ստորև գծապատկերում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2019-2021 թվականների ամփոփ ցուցանիշները:



Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված աուդիտորների վերաբերյալ 2019-2021 թվականների համապատասխան ցուցանիշների դինամիկան արտացոլված է ստորև ներկայացված գծապատկերում.


Հանրային հատվածի կազմակերպություններում աշխատող ներքին աուդիտորների թվաքանակը



2021 թվականին 2019-2020 թվականների համեմատությամբ փոփոխության է ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2021 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2020 թվականի համեմատությամբ պակասել է 9-ով կամ 10%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 11-ով կամ 40.7%-ով, միննույն ժամանակ 2019 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 138-ով կամ 63%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 30-ով կամ 65.2%-ով:


ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2019-2021 թվականների, ունի հետևյալ պատկերը:

Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակի հարաբերակցությունը



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 97 աուդիտորներից թվով 71-ը հանդիսանում են ՊՄ-ների, իսկ թվով 26-ը՝ ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ: 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ ՊՄ-ների աուդիտորների թիվը պակասել է 11-ով կամ 13.5%-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 9-ով կամ 25.7%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ ՊՄ-ների աուդիտորների թվաքանակը պակասել է 127-ով կամ 64.1%-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 41-ով կամ 61.1 %-ով:


ՊՄ-ներում և ՏԻՄ-երում ներքին աուդիտորների թվաքանակը



2021 թվականին փոփոխություն է արձանագրվել նաև ՊՄ-ների և ՏԻՄ-երի որակավորված և ուսուցանվող աուդիտորների քանակական հարաբերակցության մեջ: Հաշվետու տարում ՊՄ-ների որակավորված աուդիտորների թվաքանակը 2020 թվականի համեմատությամբ պակասել է 3-ով կամ 4.8%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 108-ով կամ 64.6%-ով, ուսուցանվող աուդիտորների թվաքանակը 2020 թվականի համեմատությամբ պակասել է 8-ով կամ 40%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ ավելացել՝ 11-ով կամ 35.4%-ով:

ՊՄ-ների որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2019-2021 թվականների, ունի հետևյալ պատկերը.


Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՊՄ-ներում



Հաշվետու տարում ՏԻՄ-երի որակավորված աուդիտորների թվաքանակը նվազել է 2020 թվականի համեմատությամբ 6-ով կամ 21.4%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 30-ով կամ 57.6%-ով: Ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է 2020 թվականի համեմատությամբ՝ 3-ով կամ 42.8%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 8-ով կամ 53.3%-ով:

ՏԻՄ-երի որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2019-2021 թվականների, ունի հետևյալ պատկերը.

Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՏԻՄ-երում



2021 թվականին «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկվելու նպատակով ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեությամբ զբաղվող Կազմակերպություններից ստացվել է 3 հայտ, որոնք բավարարվել են և այդ կազմակերպություններն ընդգրկվել են «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում», տարեսկզբի 14 Կազմակերպությունից հասնելով 17-ի:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները խախտելու պատճառով 4 Կազմակերպություն դուրս են մնացել հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից:

Այսպիսով 2021 թվականի տարեվերջին «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկված կազմակերպությունների թիվը 13 է: Նշված ցուցանիշը 2019-2020 թվականների համեմատությամբ նվազել է 1-ական ցուցանիշով:

Հաշվետու տարվա ավարտին՝ ՀՀ հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված ներքին աուդիտի արդյունքների և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությունների, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 2915 միավորից 861-ը կամ 29.5%-ը և 15160 գործառույթից 5231-ը կամ 34.5%-ը: Նշված ցուցանիշը 2020 թվականի համեմատությամբ աճել է՝ ըստ միավորների 21.5%-ով և ըստ գործառույթների՝ 32.8%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ նվազել է, համապատասխանաբար, 37.6%-ով և 29.7%-ով:

2021 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 858 միավոր և 4904 գործառույթ կամ աուդիտի միջավայրի 29.4%-ը: Նշված ցուցանիշը, 2020 թվականի համեմատությամբ ըստ միավորների աճել է 75.5%-ով և ըստ գործառույթների 82.1%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ նվազել է համապատասխանաբար 40.4%-ով և 26.3%-ով:

Ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վերոհիշյալ ցուցանիշները ունեն հետևյալ պատկերը.

ՊՄ-ների 1919 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 653-ը կամ միավորների 34.0%-ը և 10448 գործառույթից՝ 4453-ը կամ 42.6%-ը, 2020 թվականին պլանավորված միավորների 21.6%-ի և գործառույթների 26.8%-ի դիմաց, իսկ 2019 թվականին, համապատասխանաբար, 34.7%-ի և 40.7%-ի դիմաց:

2021 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների 665 միավոր կամ 34.7% և 4169 գործառույթ կամ 39.9%, 2020 թվականին՝ միավորների 21.7%-ը և գործառույթների 22.9 %-ը, իսկ 2019 թվականին՝ միավորների 34.1%-ը, գործառույթների 31.0%-ը:

Միևնույն ժամանակ ՏԻՄ-երի գծով հաշվետու տարում՝

պլանավորվել է 996 միավորներից աուդիտի ենթարկել 208 միավոր կամ միավորների 20.9%-ը և 4712 գործառույթից՝ 778-ը կամ 16.5%-ը, 2020 թվականին՝ միավորների 24.9%-ը և գործառույթների 30.6%, 2019 թվականին համապատասխանաբար 25.3%-ը և 34.2%-ը.

փաստացի աուդիտի է ենթարկվել 193 միավոր կամ դրանց 19.4%-ը և 735 գործառույթ կամ 15.6%-ը, 2020 թվականի միավորների 19.0%-ի և գործառույթների 24.4%-ի, 2019 թվականի համապատասխանաբար 22.5%-ի և 30.0%-ի դիմաց:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2021 թվականի ՊՄ-ների և ՏԻՄ-երի փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 99.7%, իսկ ըստ գործառույթների՝

93.8%, 2020 թվականի համապատասխանաբար 87.6%-ի և 81.6%-ի, իսկ 2019 թվականի՝ 96.2%-ի և 78.2%-ի դիմաց:

Փաստացի կատարողականի ցուցանիշը ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալն է.

ՊՄ-ների դեպքում ըստ միավորների 2021 թվականին այն գերակատարվել է՝ կազմելով 101.8%, 2020 թվականի համեմատ ավելանալով 1.1%-ով, իսկ 2019 թվականի համեմատ՝ 3.5%-ով, ըստ գործառույթների՝ 2021 թվականին՝ 93.6%, 2020 թվականին՝ 83.2%, 2019 թվականին՝ 76.3%,

ՏԻՄ-երի դեպքում ըստ միավորների 2021 թվականին այն կազմել է 92.8%, 2020 թվականին՝ 75.6%, 2019 թվականին՝ 89.0%, ըստ գործառույթների՝ 2021 թվականին՝ 94.5%, 2020 թվականին՝ 79.7%, 2019 թվականին՝ 87.7%:

2021 թվականի տարեկան ծրագրով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պլանավորել են իրականացնել 877 առաջադրանք¹, որը 2020 թվականի համեմատությամբ աճել է 196-ով կամ 28.8%-ով, իսկ 2019 թվականի համեմատությամբ նվազել է 641-ով կամ 42.2%-ով: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2021 թվականին 662 առաջադրանք, 2020 թվականին 344 առաջադրանք, 2019 թվականին 1175 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2021 թվականին՝ 215, 2020 թվականին՝ 340, 2019 թվականին՝ 343 առաջադրանքներ:

2021 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 877 առաջադրանքից 867-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ 10-ը՝ խորհրդատվական ծառայություն մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2020 թվականին կազմել են 637 և 44, իսկ 2019 թվականին՝ 1511 և 7: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2021 թվականին՝ 659 և 3 առաջադրանք, 2020 թվականին՝ 339 և 2 առաջադրանք, 2019 թվականին՝ 1172 և 3 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2021 թվականին՝ 208 և 7, 2020 թվականին՝ 298 և 42, 2019 թվականին՝ 339 և 4 առաջադրանք:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակը 2021 թվականին կազմել է 1108 առաջադրանք, 2020 թվականին՝ 1324 և 2019 թվականին՝ 1585, որը ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2019

¹Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

թվականի համեմատությամբ նվազել է՝ համապատասխանաբար 16.3%-ով և 30.1%-ով: Նշված ցուցանիշը 2021 թվականին ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 865, 2020 թվականին՝ 567, 2019 թվականին՝ 1048 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2021 թվականին՝ 243, 2020 թվականին՝ 757, 2019 թվականին՝ 299 առաջադրանք:

Համաձայն նույն աղյուսակով ներկայացված տվյալների ՊՄ-ներում և ՏԻՄ-երում 2021 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 148 աուդիտորական առաջադրանք (գերակատարումը կազմել է 17.1%) 2020 թվականի 36.4%-ի դիմաց, իսկ 2019 թվականին տարեկան ծրագիրը թերակատարվել է 5.4%-ով՝ պլանավորված 82 առաջադրանք չի իրականացվել: 2021 թվականին իրականացված լրացուցիչ թվով 148 աուդիտորական առաջադրանքից թվով 135-ը կամ 91.2%-ը իրականացվել է ՊՄ-ներում, իսկ թվով 13-ը կամ 8.8%-ը՝ ՏԻՄ-երում:

2021 թվականին մատուցվել է լրացուցիչ (ոչ պլանային) 83 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2020 թվականի 411 և 2019 թվականի 149 խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2021 թվականին, այնպես էլ 2019-2020թթ. կատարվել են 100%-ով:


Համաձայն 2021 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների՝ ունեն ստորև ներկայացված պատկերը.

2021 թվականին ՊՄ-ներում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակները, բացառությամբ համապատասխանության կամ իրավական աուդիտի, 2019 թվականի համեմատությամբ կրճատվել են, իսկ 2020 թվականի համեմատ փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքի քանակները ունեցել են ավելի տատանողական բնույթ:

Այսպես, համակարգի գնահատման աուդիտի քանակը 2020 թվականի համեմատ ավելացել է շուրջ 24 անգամ, մինչդեռ 2019 թվականի համեմատ պակասել 22.7%-ով, ֆինանսական աուդիտի քանակը համապատասխանաբար նվազել է 17.0%-ով և 62.8%-ով, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը աճել է 35 և 12 անգամ, գնումների աուդիտի քանակը աճել է 11.6%-ով և նվազել՝ 36.2%-ով, 2020 թվականին կատարողականի աուդիտ չի իրականացվել, իսկ 2019 թվականի համեմատ նվազել է 87.3%-ով, 2019-2021 թվականներին տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2021 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 125 աուդիտներից՝ 25-ը կամ 20.0%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 29-ը կամ 23.2%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 71-ը կամ 56.8%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՊՄ-ներում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2019-2021 թվականների ամփոփ ցուցանիշները.




Հաշվետու տարում ՏԻՄ-երում իրականացված աուդիտորական առաջադրանքներում փոփոխությունն ըստ տեսակների ունի հետևյալ պատկերը: 2021 թվականին, 2020 և 2019 թվականների համեմատությամբ փոփոխվել են գնումների աուդիտի և կատարողականի աուդիտի քանակները. համապատասխանաբար՝ գնումների աուդիտը նվազել է 84.8%-ով և աճել՝ 228.6%-ով, կատարողականի աուդիտը նվազել է 46.9%-ով և աճել՝ 54.5%-ով, համակարգի գնահատման աուդիտի քանակը նվազել է 56.4%-ով և 69.2%-ով, ֆինանսական աուդիտի քանակը աճել է 47.2%-ով և 35.9%-ով, համապատասխանության կամ իրավական

աուդիտի քանակը աճել է 20%-ով և նվազել 15.2%-ով: 2019-2021 թվականների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:


2021 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 23 աուդիտներից՝ 5-ը կամ 21.7 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 18-ը կամ 78.3 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՏԻՄ-երում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2019-2021 թվականների ամփոփ ցուցանիշները.



Այսպիսով, ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքներն ըստ աուդիտի տեսակների ունեն ստորև ներկայացված պատկերը.

ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտի տեսակներն՝ ըստ տարիների



Համաձայն ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2021 թվականին գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումնասիրվել է թվով 1011 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 939 գործառույթ, իսկ ՏԻՄ-երում՝ 72 գործառույթ, որից գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող զին ունեցող՝ 61, այդ թվում՝ ՊՄ-ներում 47, իսկ ՏԻՄ-երում՝ 14, գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող զին ունեցող՝ 949 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 891, իսկ ՏԻՄ-երում՝ 58, պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումներ՝ 1, այդ թվում՝ ՊՄ-ներում 1:

2021 թվականին աճել է ներքին աուդիտի կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը, մասնավորապես, նախորդ տարվա արձանագրված 2742 անհամապատասխանության փոխարեն 2021 թվականին արձանագրվել է թվով 5422 անհամապատասխանություն, որից ՊՄ-ներում՝ 4385 և ՏԻՄ-երում 1037՝ ապահովելով 97.7%-ով աճ: Նշված ցուցանիշը 2020 թվականի համեմատությամբ ՊՄ-ներում

աճել է 3059-ով կամ 230.7%-ով, իսկ ՏԻՄ-երում նվազել է 379-ով կամ 26.8%-ով: 2021 թվականին աճել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 100-ի, նախորդ տարվա 57-ի փոխարեն, այդ թվում՝ ՊՄ-ներում 6 դեպք, ինչպես նախորդ տարի, իսկ ՏԻՄ-երում՝ 94 դեպք՝ նախորդ տարվա 51-ի փոխարեն:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն², ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան:

² Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա՝ ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտին իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները Կազմակերպություններին արտապատվիրակված մարմիններից և համայնքներից:

**Լիազոր մարմին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ
աղյուսակներ**

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.42	3.0	3.3
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.64	3.2	3.5

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	127*	203*	265
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	111	174	219
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	16	29	46

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	2915	2399	4668
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	15160	11417	21575
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	861	558	1495
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	5231	3298	8504
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	858	489	1439

* Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ Կկազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդգրկված են եղել ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի աշխատանքներում:

6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	4904	2693	6652
----	---	------	------	------

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	354	191	544
2)	Կատարողականի աուդիտ	24	32	66
3)	Ֆինանսական աուդիտ	165	171	340
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	301	118	194
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	148	263*	203
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	30	29*	112
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	26	26*	60
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	4	3*	52
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	47	233*	71
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	19	117*	36
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	28	116*	35
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	71	1*	20
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	14	1*	10
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	57	0*	10
7)	Խորհրդատվության մատուցում դեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	81	442	123
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	12	12	22

9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	0	1	8
10)	Այլ, այդ թվում՝	23	94	85
11)	Ընդամենը	1108	1324	1585

*Գնումների աուդիտի քանակը ներառում է աուդիտի այլ տեսակների շրջանակում իրականացված գնումների աուդիտը ևս, որն իր մեջ ներառել է գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտները, ընդ որում ինչպես գնման ընթացակարգի, այնպես էլ պայմանագրի կատարման մասը:

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	877	681	1518
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	867	637	1511
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	10	44	7
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1108	1324	1585
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	1015	869	1429
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	93	455	156

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2021թ.	2020թ.	2019թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	5422	2742	6298
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	3156	1788	3436
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	2266	954	2862
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	4176	2349	4965

3)	Առողիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	3407	2277	4815
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	1964	1349	3590
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	19	15	67
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	8	128	193
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	1416	785	965
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	4170	2159	6297
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	100	57	152
4.2)	Ինքնուրույն կանխված	4070	2102	6145

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Ազգային ժողով
2. ՀՀ սահմանադրական դատարան
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
4. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
5. ՀՀ առողջապահության նախարարություն
6. ՀՀ արդարադատության նախարարություն
7. ՀՀ Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
9. ՀՀ պաշտպանության նախարարություն
10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
11. ՀՀ կադաստրի կոմիտե
12. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
13. ՀՀ պետական եկամուտների կոմիտե
14. ՀՀ վիճակագրական կոմիտե
15. ՀՀ քաղաքաշինության կոմիտե
16. ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե
17. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե
18. ՀՀ քննչական կոմիտե
19. ՀՀ ջրային կոմիտե
20. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
21. ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
22. ՀՀ միասնական սոցիալական ծառայություն
23. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
24. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
25. ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
26. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով
27. ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ
28. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
29. ՀՀ դատական դեպարտամենտ
30. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Մարզպետարաններ

31. ՀՀ Արագածոտնի մարզպետարան
32. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
33. ՀՀ Լոռու մարզպետարան
34. ՀՀ Կոտայքի մարզպետարան
35. ՀՀ Սյունիքի մարզպետարան

36. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
37. ՀՀ Տավուշի մարզպետարան

Ցանկ N 2

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Երևանի քաղաքապետարան
2. Ակունքի համայնքապետարան
3. Ամասիայի համայնքապետարան
4. Այգեկի համայնքապետարան
5. Աշոցքի համայնքապետարան
6. Ապարանի համայնքապետարան
7. Առինջի համայնքապետարան
8. Արենիի համայնքապետարան
9. Արզնիի համայնքապետարան
10. Բալահովիտի համայնքապետարան
11. Բյուրեղավանի համայնքապետարան
12. Գառնիի համայնքապետարան
13. Գեղադիրի համայնքապետարան
14. Գորիսի համայնքապետարան
15. Թալինի համայնքապետարան
16. Թումանյանի համայնքապետարան
17. Ծաղկաձորի համայնքապետարան
18. Ծովակի համայնքապետարան
19. Կապանի համայնքապետարան
20. Հացավանի համայնքապետարան
21. Հրազդանի համայնքապետարան
22. Ճամբարակի համայնքապետարան
23. Նոր Հաճնի համայնքապետարան
24. Ողջաբերդի համայնքապետարան
25. Չարենցավանի համայնքապետարան
26. Պեմզաշենի համայնքապետարան
27. Ջերմուկի համայնքապետարան
28. Ջրվեժի համայնքապետարան
29. Սևանի համայնքապետարան
30. Սիսիանի համայնքապետարան
31. Վանաձորի համայնքապետարան
32. Տեղի համայնքապետարան